ՀՍՍՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ

Վ. Ե. ԽՈՉԱՐԵԿՅԱՆ

Իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմներից և ազգամիջյան կոտորածներից ավերակների վերածված Սովետական Հայաստանը ժառանգեց չափազանց քիչ բնակչություն՝ ընդամենը 720 հազար մարդ, մինչդեռ 1913 թ. նրա տերիտորիայում բնակվում էր ավելի քան 1 մլն. մարդ։ Եվ գա այն դեպքում, երբ Արևմտյան Հայաստանից և ցարական Ռուսաստանի նախկին հայկական մարզերից փախած գաղթականությունը ողողել էր ողջ Արևելյան Հայաստանը։ Թուրքական զորքերի և սովի հետապնդումներից դրդված՝ հարյուր հազարավոր հայեր փրկություն գտան Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի, Դոնի և Ռոստովի տափաստաններում, ուր ռուս ժողովուրդը ևղբայրաբար ընդունեց նրանց։

Հայաստանից տեղահան արված բնակչության թիվը (հիմնականում հայեր) հասնում էր 400 հազարի[1]։

Անկտակած, Հյուսիսային Կովկաս և Ուկրաինա բախտ վիճակվեց հասնել միայն դրանց մի մասին։ Որոշ մասը Հյուսիսային Կովկաս անցնելու ուղղակի անհաջող փորձ կատարեց, մի քանի հազար մարդ ապաստանեցին Վրաստանում, ոմանք էլ դարձան սովի և համաճարակի զոհ։ Միայն Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականների թիվը հասնում էր 150 հազարի, որից մոտ 130 հազարը հայեր էին, մնացածը հույներ և ասորիներ[2]։

Հայ բնակչությունը դեպի Հյուսիսային Կովկաս էր շարժվում Վրաստանի վրայով։ Այդ ընթացքում Վրաստանում ապաստան գտան Արևմտյան Հայաստանից գաղթած 14 հազար հայեր[3], որոնք բնակություն հաստատեցին Արևելյան Վրաստանի համեմատաբար նոսր բնակեցված գյուղական շրջաններում։ Հետագայում Թբիլիսիում հաշվվում էր մոտավորապես 25 հազար հայ, սդրբրբեջանցի և եղդի գաղթական[4]։ Այն պահին, երբ Ռուսաստանում ճառագել էր Հոկտեմբերյան վենսախինդ արևը, Անդրկովկասի բուրժուա-ազգայնական կուսակցությունները, ելնելով իրենց դասակարգային հակաժողովրդական շահերից, ազգամիջյան վռիվներ էին հրահրում Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների միջև։ Այդ իսկ պատճառով մուսավաթական Ադրբեջանը ոչ միայն չկարողացավ ապաստան տալ հայ գաղթականությանը, այլև վերածվեց արտագաղթի մեծ օջախի։ Առաջին աշխարհամարտի և ազգամիջյան ընդհարումների ընթացքում Ադրբեջանից Հայաստան արտագաղթած հայերի թիվը, ոչ լրիվ տվյալներով, կազմել է շուրջ 235 հազար (99 հազարը քաղաքային վայ-

---

1 *Տե՛ս ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՀՍՇ ԿՊԱ), ֆ. 123, ց. 42, գ. 2, թ. 44։*

2 *Նույն տեղում, թ. 43։*

3 *Տե՛ս „Заря Востока", 15, I, 1927.*

4 *ՀՍՍՀ ՀՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 42, գ. 108, թ. 31։*

րերից) մարդ[5]։ Գանձակի և Բաքվի նահանգի դաշտավայրային հայ բնակչության մի մասը տապաստանեց բարձրավանդակներում[6]։ Արևելյան Հայաստանում բնակվող ադրբեջանական բնակչության մի զգալի մասը, շուրջ 235 հազար մարդ, արտագաղթեց Ադրբեջան[7]։

Այսպիսով, ներգաղթող հայության մեծ մասին ինչ-որ չափով պատսպարած Արևելյան Հայաստանը ազգամիջյան ընդհարումների տարիներին վերածվելով ռազմական գործողությունների անմիջական ասպարեզի, ինքը ևս դարձավ հայ և ադրբեջանական բնակչության արտագաղթի օջախ։

Հասկանալի է, որ նման պայմաններում խոսք չէր կարող լինել բնակչության բնական տճի մասին։

Հայաստանում 1914—1920 թթ. բնակչության ծնելդի խիստ անկումն ուղեկցվեց նրա մահացության գործակցի բարձրացմամբ։ Դա պայմանավորված էր ոչ միայն իմպերիալիստական պատերազմի, ազգամիջյան ու քաղաքացիական վրիվների անմիջական զոհերով, այլև բնակչության զանգվածային մահացությամբ, որը սովի ու համաճարակների հետևանք էր։

Միայն 1919 թ. մահացել է Երևանի բնակչության 20—22 %-ը[8]։ Նույն թվականին Արևքսանդրապոլում մահացածների ավելի քան 30%-ը համաճարակի, 20,6%-ը՝ վարակիչ, մոտ 21%-ը մանկական հիվանդությունների[9] զոհ էր և այլն։ 1914—1919 թթ. ՀՍՍՀ ներկայիս սահմաններում բնակչությունը նվազել էր ավելի քան 600 հազարով[10]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով հայ ժողովուրդը փրկվեց ոչ միայն իր գոյությանը մշտապես սպառնացող վտանգից, այլև ստացավ իր բախտը տնօրինելու երաշխիք, եղբայրական մյուս ժողովուրդներին հավասար և նրանց հետ համատեղ ազատ զարգացման մեծ հնարավորություն։ Հայաստանում սովետական կարգերը պայմանավորեցին բնակչության բուռն աճ։

1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալներով ՀՍՍՀ-ում բնակչությունը կազմեց 782 հազար մարդ[11], 1926 թ. մարդահամարի տվյալներով՝ 881,3 հազար։ 1930 թ. ՀՍՍՀ-ի բնակչությունը հասավ 1913 թ. մակարդակին, իսկ 1940 թ. հունվարի 1-ին կազմեց շուրջ 1 մլն. 320 հազար մարդ։ ՀՍՍՀ-ում բնակչության բացարձակ թիվը շատ արագ ավելացավ հետպատերազմյան շրջանում։ 1940 թ. մինչև 1959 թ. այն ավելացավ շուրջ 443 հազարով, իսկ մինչև 1970 թ. 1 մլն. 173 հազարով, այսինքն գրեթե կրկնապատկ-

---

5 Նույն տեղում, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 36։

6 Г. Пичикян, Народное хозяйство и кооперация Армении. Тифлис, 1927, стр. 96.

7 ՀՍՍՀ ՀՀ ԿՊԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 38։ Ինտերվենցիայի և մուսավաթական իշխանության տարիներին՝ 1918—1919 թթ. արտագաղթի պատճառով Ադրբեջանի ընդհանուր բնակչությունը պակասեց 401,5 հազարով։ Տե՛ս Материалы по экономической истории Азербайджана (к V международному конгрессу экономической истории). Баку, 1970, стр. 18.

8 Տե՛ս Статистический Сборник, Ереван, 1925, стр. 17.

9 Տե՛ս Ջ. Կորկոտյան, Ձերմակ ջարդից դեպի կարմիր չինարարություն, Երևան, 1929, էջ 38։

10 Տե՛ս նույն տեղում, էջ 29։

11 Տե՛ս Հայաստանի ազգաբնակչությունը ըստ սեռի, տարիքի, գրագիտության և ազգության, 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը, պրակ 2, Երևան, 1924, էջ 94։

վնց։ 1970 թ. ՀՍՍՀ-ի բնակչությունը 1940 թ. համեմատությամբ ավելացավ 89,6 %-ով, իսկ ՍՍՀՄ-ում՝ 24 %-ով[12]։

Սեծ սովետական իշխանության հաստատման առաջին մի քանի տարինեբին ՀՍՍՀ բնակչության ամի հիմնական գործոնը մեխանիկական աճն էր, ապա հետագայում դարձավ բնականը, թեև մեխանիկական աճը առ այսօր էլ մեծ դեր չի խաղում բնակչության վերարտադրության աստիճանը կանխորոշելու գործում։

Թեև Հայաստանում վաչին հարյուր հազարավոր գաղթականներ[13], սովետական կարգերի հաստատումով սկիզբ է առնում բնակչության ներգաղթի մի ուժեղ հոսանք։

Սովետական իշխանության կիրառած լենինյան ազգային քաղաքականությունը բոլոր ազգերի միջև սերմանեց բարեկամական ջերմ զգացում և մեծ սդդակ հանդիսացավ Հայաստանից արտագաղթած բոլոր ազգությունների զանգվածային վերադարձի համար[14]։

Զանգվածային ներգաղթի հետևանքով, 1920 թ. դեկտեմբերից սկսած, երկաթուղային կայարաններում, նրանց մոտիկ և սահմանամերձ բնակավայրերում կոտակվել էին մեծ թվով գաղթականներ։

Հայաստանի Նախիջևան-Շարուր գավառի գաղթականներին օգնություն կազմակերպելու գծով ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (ՆԳԺԿ) լիազորը 1921 թ. հունվարի 11-ին ՆԳԺԿ-ին հղած զեկուցագրում հայտնում է,

---

12 Տե՛ս «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 28։

13 Արևմտյան Հայաստանից արտագաղթած բնակչությունը կուտակվել էր Հայաստանի սակավահող մի քանի գավառներում՝ Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Երևանի և այլ գավառներում։ Հողազուրկ գաղթականությանը և տեղացի բնակչությանը հողաբաժնով, ուստի և զբաղմունքով, ապահովելու նպատակով 1923—1928 թթ. հանրապետության սահմաններում կատարվում էին մեծ վերաբնակեցումներ։ Հողազուրկ շրջաններում կուտակված գաղթականությունը կազմակերպված կարգով վերաբնակեցվում է Բասարգեչարի, Աղբաբայի, Վեգիբասարի և այլ ազատ հողային տարածություններ ունեցող և ոռոգման ենթակա շրջաններում (տե՛ս ՀՍՍՀ ՀՀ ՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 42, գ. 16, թ. 3, գ. 21, թ. 16, գ. 25, թ. 16, գ. 29, թ. 39, գ. 30, թ. 1, գ. 41, թ. 56, գ. 101, թ. 31, գ. 103, թ. 4—33, գ. 108, թ. 31—32, գ. 122, թ. 42—44 և այլն)։

Նկատի առնելով գաղթականներին հողով, զբաղմունքով, բնակարաններով բավարարելու և այլ կարգի օգնություն ցույց տալու խնդիրները, Անգրկենտգործկոմի նախագահությունը 1925 թ. հուլիսի 5-ի որոշմամբ կազմում է հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվում է երկու ամսվա ընթացքում ուսումնասիրել գաղթականների գրությունը և նախագիծ ներկայացնել Անգրկենտգործկոմի նախագահությանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով (տե՛ս ՀՍՍՀ ՀՀ ՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 99, թ. 8)։ 1925—26 թթ. վերաբնակեցումները մեծ մասշտաբներ են ընդունում։ Մուրճենական, Անգրֆեդերացիայի և հանրապետական բյուջեներով բաց թողնվող անվերադարձ գումարներով և վարկերի միջոցով վերաբնակիչների համար կառուցվում էին հարմարավետ նոր բնակարաններ, ձեռք բերվում լծկան և կաթնատու անասուններ, գնվում գյուղգործիքներ, սերմեր և այլն (տե՛ս ՀՍՍՀ ՀՀ ՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 103, թ. 4—32, գ. 29, թ. 41, 56, գ. 84, թ. 23, գ. 86, թ. 54, գ. 96, թ. 5, գ. 108, թ. 1, 6, 20, գ. 120, թ. 1—2, գ. 122, թ. 9, 42—44, գ. 124, թ. 2—6 և այլն)։

14 1926 թ. կատարված հարցումային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչ Հայաստանում սովետական կարգերի հաստատումը այնտեղից Ադրբեջան արտագաղթած 234,9 հազար ադրբեջանցիների մոտ 80 %-ը վերադարձել է ՀՍՍՀ, բնակություն հաստատել իր նախկին բնակավայրում և ապահովվել հողաբաժնով։ ՀՍՍՀ ԺողկոմխորՀը 1923 թ. դեկտեմբերի 8-ին որոշեց Հայաստան վերադարձող բոլոր նախկին բնակիչներին բավարարել հողաբաժնով, անկախ նրանց ազգային պատկանելությունից։

Արխիվային վավերագրերում կան հիշատակություններ այն մասին, որ ետեղական բնակչության գերակշռող մասը, որ հողաբաժին են ստացել, ՀՍՍՀ վերադարձած ազգային փոքրա-

որ «ժամանակավոր սահմանից (Արարատ կայարան) սկսած ընդհուպ մինչև Նախիջևան երկաթգծի երկայնքով ընկած գյուղերում կենտրոնացել են գաղթականների մեծ զանգվածներ, որոնք շարժվում են Երևանի ուղղությամբ»[15]; Միայն Սառարակ գյուղում հավաքվել էր 15 հազար գաղթական[16]։

Հայաստանի նորաստեղծ իշխանությունը, չնայած իր շափազանց սուղ միջոցներին, հնարավորին չափ մտահոգվում էր հայ և ադրբեջանական գաղթականներին նյութական օգնություն և պատսպարվելու հնարավորություն տալու հարցով։

Ջանգիբասարի և Վեդիբասարի գաղթականության գծով ներքին գործերի ըիազորը 1921 թ. հունվարի 16-ին ներքին գործերի ժողկոմ ներկայացրած զեկուցագրում հաղորդում է, որ «Ճանապարհին գաղթականների համար կազմակերպված են սննդի կետեր, ...թուլլերին և հիվանդներին տեղափոխելու համար տրամադրված են սայլեր։ ...Ջանգիբասարում ադրբեջանական գաղթականները տեղավորված են հայերի հետ, նրանց միջև հարաբերությունները բարեկամական են»[17]; Նույն զեկուցագրում ասված էր, որ «Գաղթականների 60—70 %-ը դարձել է իսկական կմախք, նույնիսկ պորցրել մարդկային տիպագծերը՝ այտուցված ձեռքերով, ոտքերով և դեմքով, մերկ, տատաբերիկ, փաթիաթված հին կեղտոտ լաթի կամ խսիրի կտորով»[18]; «Հունվարի 12-ին,—շարունակում է զեկուցագրի հեղինակը,—երբ մուրը նոր էր ընկնում Դավալուից վերադառնալու ժամանակ ճանապարհի մեջտեղում նկատեցի մի գաղթականուհու, որը ընդամենը մի քանի րոպե առաջ՝ բաց երկնքի տակ 12 աստիճան ցրտության պայմաններում ծննդաբերել էր։ Այդ գաղթականուհին իր նորածնին փաթաթել էր բաց, կեղտոտ պարկի մեջ... Չափազանց շատ են այրի կանայք, որոնք նեղկայանալով սննդի կետերը՝ հայտնում են, թե նրանք իրենց երեխաներին իրենց հետ բերելու հնարավորություն չունենալով, թողել են ճանապարհին»[19]։

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. վերջը արտասահմանից և հարևան հանրապետություններից ՀՍՍՀ ներգաղթածների թիվը հայտնի չէ, քանի որ այդ ժամանակ նեղգաղթն ուներ չափազանց տարերային բնույթ, չկար ոչ մի հաշվառում[20]։ 1922 թ. արդեն միայն արտասահմանից, գլխավորապես Միջա-

---

ժանություններն են՝ ադրբեջանցիները և 2500 շունչ քրդերը» (տե՛ս ՀՍՍՀ ՀՀ ՍՇ ԿՊԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 37, 48, 49)։

Մուսավաթականների տիրապետության տարիներին Ադրբեջանի քաղաքներից արտագաղթած հայ բնակչությունը իր հերթին գրեթե ամբողջությամբ վերադարձավ Սովետական Ադրբեջան։ Գավառներից արտագաղթած բնակչության շուրջ 90%-ը մշտական բնակություն հաստատեց ՀՍՍՀ-ում (նույն տեղում, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 49)։

15 ՀՍՍՀ ՀՀ ՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 42, գ. 1, թ. 19։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, գ. 1, թ. 27, 29, 31։

18 Նույն տեղում, թ. 30։

19 Նույն տեղում։

20 1921 թ. սկսած Հայաստան ներգաղթած բնակչության որոշ մասը սովետական իշխանության հասցեին դաշնակների հերյուրանքների ազդեցության տակ Հայաստանից արտագաղթած քաղաքական վտարանդիներն էին։ Սովետական Հայաստանի կառավարությունը հրապարակեց դեկրետ նրանց ներման մասին՝ վերապահելով հայրենիք վերադառնալու և նրա աղատ ու լիիրավ քաղաքացին դառնալու իրավունք։ Քաղաքական վտարանդիների նկատմամբ այդ քայլը մերկացրեց դաշնակների հակասովետական պրոպագանդայի սնանկությունը և նպաստեց արտասահմանից կատարվող ներգաղթին։ (Տե՛ս նույն տեղում, գ. 88, թ. 54)։

պետքից, մասամբ Պարսկաստանից, ինչպես նաև ՌՍՖՍՀ-ից ներգաղթածների թիվը (Անդրկովկասից ներգաղթողների հաշվառում չի տարվել) կազմել է 9162 մարդ[21], 1922—1927 թթ. արտասահմանից ՀՍՍՀ է ներգաղթել 18565 մարդ[22]։

Սովետական իշխանությունը հենց սկզբից մշակեց իր պարզորոշ վերաբերմունքը գաղթականության և օտար երկրներից ներգաղթողների նկատմամբ։ Դա իր արտահայտությունը գտավ նրանում, որ ամեն մի գաղթական օրենքով ճանաչվեց ՍՍՀՄ լիիրավ քաղաքացի։ Ըստ Համառուսաստանյան Կ/Կ-ի Միության քաղաքացիության վերաբերյալ կանոնադրության 202-րդ հոդվածի 3-րդ կետի «ՍՍՀ Միության տերիտորիայում ապրող ամեն մի քաղաքացի ճանաչվում է ՍՍՀ Միության քաղաքացի, եթե նա չի հաստատում, որ ինքը օտարերկրյա քաղաքացի է»[23]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին որոշ չափով ներգաղթն ավելանում էր նաև Հյուսիսային Կովկաս արտագաղթած հայ բնակչության հաշվին։ Ըստ որում, եթե մինչև 1923 թ. Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների մի զգալի մասը ցանկանում էր վերադառնալ Հայաստան[24], ապա 1923 թ. վերջից իրավիճակը փոխվում է։ Մի կողմից Հյուսիսային Կովկասում սովետական իշխանության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նրանց տնտեսական վիճակի կայունացումը, մասնավորապես ջրաղացքների հարցի լուծումը և ռուսաց լեզուն սովորելու միջոցով տեղական բնակչության հետ հաղորդակցության ուժեղացումը, իսկ մյուս կողմից Հայաստանում տեղի ունեցած որոշ գաղթականների և սակավահող տեղական բնակչության տուկատությունը, վերադարձը ունենալու դժվարությունները ոչ միայն վանեցիներին ներգաղթը Հյուսիսային Կովկասից, այլև ՀՍՍՀ մի շարք գյուղերի բնակիչներ համախոսական դիմումներով խնդրում էին ՀՍՍՀ և ՌՍՖՍՀ կառավարություններին իրենց Հյուսիսային Կովկաս վերադառնալու թույլտվություն տալ[25]։

Չնայած ՀՍՍՀ-ում ևս հավատար հողաբաժանում իրականացնելու և վերաբնակեցման ճանապարհով հնարավոր դարձավ զգալիորեն պակասեցնել հողազուրկ բնակչության թիվը, այնուամենայնիվ նրանց մի մասը գնում էր հանրապետության սահմաններից դուրս, քանի որ ՀՍՍՀ քաղաքները չունեին վերաբնակեցման և ընդլայնման այն թափը, ինչ Անդրկովկասի մյուս գլխավոր քաղաքները։ Մխոժամանակ գյուղի ագրարային բնակչությունը զգալ էր ճգտում մասնագիտության, որակավորում ձեռք բերելու նպատակով։ Ահա թե ինչու XX դ. 20-ական թվականների երկրորդ վեցի հայկական գյուղը բնութագրվում էր արտագնացների մեծ մասշտաբներով, որը հանգեցնում էր բնակչության աճի նվազմանը։ Բայց դա անցողիկ շրջան էր։ Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնումը և հետագա զարգացումը, իրականացվող սոցիալ-տնտեսական վիթխարի վերափոխումների հետ հանգեցրին արտագնացության դադարեցմանը։ Բնակչության բնական բարձր

---

21 ՀՍՍՀ ՀՀ ԿՊԱ, ֆ. 123, ց. 42, գ. 88, թ. 54, գ. 103, թ. 8։

22 Նույն տեղում, թ. 54—59, գ. 103, թ. 18։ «Գարուն», 1970, № 1, էջ 89։

23 Собрание законов и распоряжений рабоче-крестьянского правительства Союза Советских Социалистических Республик, М., 1924, стр. 364.

24 ՀՍՍՀ ՀՀ ԿՊԱ, ֆ. 123, ց. 42, գ. 11, թ. 8։

25 Նույն տեղում, գ. 37, թ. 20։

աճը և արտագնացության նվազումը պայմանավորեցին ՀՍՍՀ բնակչության ամենացարգար տեմպերը Սովետական Միությունում։

Ցարական Ռուսաստանում բնակչության վերարտադրությունը բնութագրվում էր ծննդաբերության և մահացության բավականին բարձր ցուցանիշներով։ 1913 թ. ՍՍՀՄ ներկա տերիտորիայում բնակչության յուրաքանչյուր 1000 շնչի հաշվով ծնվողների թիվը կազմում էր 45,5, իսկ մահացողներինը՝ 29,1 մարդ։ Այդպես էր նաև նախահեղափոխական Հայաստանում։ Նրա ներկայիս տերիտորիայում 1904—1914 թթ. բնակչության յուրաքանչյուր 1000 շնչի հաշվով տարեկան միջին ծնունդը կազմել է 34, մահացողներինը՝ 21 մարդ։ Ջափազանց բարձր էր մանկական մահացությունը[26], բնակչության բարձր ծննդաբերությունը ուղեկցվում էր բարձր մահացությամբ։

«Մարդու բազմանալու պայմանները,— գրում էր Վ. Ի. Լենինը,— անմիջականորեն կախված են տարբեր սոցիալական օրգանիզմների կառուցվածքից, ուստի և ազգաբնակչության օրենքը պետք է ուսումնասիրել յուրաքանչյուր այդպիսի օրգանիզմի համար առանձին, և ոչ թե բարեհաջող կերպով հատաբաշխական կառուցվածքի պատմականորեն տարբեր ձևերից անկախ»[27]։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեր երկիրը թևակոխում է դեմոգրաֆիական այն շրջանը, երբ բնակչության բնական վերարտադրության տեմպերը սկսում են բարձրանալ ի հաշիվ մահացության խիստ կրճատման, որը տեղի է ունենում շնորհիվ բնակչության կենսամակարդակի և նրա բժշկական սպասարկման բարելավման, կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման։ Բնակչության բնական աճի բարձրացումը և ապա կայուն մակարդակի պահպանումը, որ հարատևեց մինչև 1961 թ., ուղեկցվում էին ծննդաբերության մակարդակի իջեցումով։ Դա երևում է հետևյալ աղյուսակից.

Հայկական ՍՍՀ բնակչության ծննդաբերությունը, մահացությունը և բնական աճը (բնակչության 1000 շնչի հաշվով)[28]

Տարեթվերը	Ծնվածների թիվը	Մահացածների թիվը	Բնական աճը	Ծնված 1000 երեխայից մինչև 1 տարեկանը լրանալը մահացել է
1913	46,3	23,9	22,4	204
1923	38,0	12,8	25,2	...
1928	56,0	17,0	39,0	...
1937	46,8	13,1	33,7	196
1940	41,2	13,8	27,4	119
1950	32,1	8,5	23,6	71
1960	40.3	6.8	33,5	50
1965	29,1	5.8	23,3	37
1970	22,1	5,1	17,0	25

Նախապատերազմյան Հայաստանը, որ բնութագրվում էր բնակչության վաղ ամուսնությամբ, միութենական մյուս հանրապետությունների համեմատ ուներ ծննդաբերության առավել բարձր մակարդակ։ Այստեղ 1940 թ. բնակչության յուրաքանչյուր 1000 շնչի հաշվով ծնվում էր 41,2 երեխա։ Այդ ցուցանի-

[26] Տե՛ս „15 лет Советской Армении в цифрах", Ереван, 1935, стр. 24.

[27] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 1, էջ 590։

[28] Տե՛ս «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 36, „Армения в единой семье народов СССР, Ереван, 1972, стр. 21.

շով ՀՍՍՀ-ին էր մոտենում միայն Ղազախստանը, ուր բնակչության 1000 շնչի հաշվով ծնվում էր 41,1 երեխա։ Բայց բնական աճով մեր հանրապետությունը Ղազախականին գերազանցում էր 7,9 մարդով և ուներ ՍՍՀՄ-ում բնական աճի ամենաարագ ցուցանիշը։

Բնակչության վերարտադրության տեմպերը և ծննդաբերության ընդհանուր դործակիցը մեր երկրում սկսեցին տատանվել բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխության հետևանքով։ Ծնելիության ընդհանուր գործակցի վրա լուրջ ազդեցություն ունեցավ, մի կողմից, պտղաբերության տարիքն ընդլյկող կանանց տեսակարար կշռի փոփոխությունը, մյուս կողմից՝ այդ տարիքի կանանց տարիքային խմբերի անբարենպաստ հարաբերակցությունը։ Բնակչության վերարտադրության ընթացքը կախված է նաև պտղաբերության տարիքի կանանց ու աղամարդկանց թվի նորմալ փոխհարաբերությունից։ Նթե բնակչության վերարտադրության ընթացքը չի խոտորվում արտակարգ պատճառների, մասնավորապես պատերազմների հետևանքով, ապա պահպանվում է հասարակության նորմալ վերարտադրությունն ապահովելու համար աղամարդկանց ու կանանց թվի անհրաժեշտ հարաբերակցությունը։ Մեր երկրում, պատերազմի հետևանքով, խախտվեց բնակչության նորմալ վերարտադրության ընթացքը։ Կանանց թիվը ավելի քան 20 միլիոնով գերազանցեց տղամարդկանց։ Պատերազմի տարիներին ծննդաբերության մակարդակը խիստ իջավ. բնակչության վերարտադրության վրա այն սկսեց ազդել նաև 60-ական թվականների կեսերից, երբ պատերազմի տարիներին ծնված հերեխաները դարձան չափահաս։ Շատ ազգային հանրապետություններում հետպատերազմյան շրջանում դրսևորվեցին մի շարք ընդհանուր տենդենցներ, որոնք հանգեցրին այդ ընթացքում ծնվող հերեխաների թացարձակ թվի աննրնդհատ ավելացմանը։ Այսպես, օրինակ, ամբողջ հետպատերազմյան շրջանում ՀՍՍՀ բնակչության վերարտադրության բնորոշ կողմերից մեկը ծննդաբերության բարձր մակարդակն էր և ծնվող երեխաների թացարձակ թվի ընդհանուր աճը, որ 1960 թ. հասավ իր ամենաբարձր սահմանին՝ ծնվեց մոտ 75 հազար հերեխա։ Դա ներկա հարյուրամյակում ՀՍՍՀ այժմյան տերիտորիայում երբևիցե ծնված հերեխաների ամենաբարձր թիվն է։

Հետպատերազմյան շրջանում ծնվող հերեխաների թացարձակ թվի մեծացումը պայմանավորված էր զորացրամով, որը հանգեցրեց ոչ միայն ամուսնության գործակցի, այլև ծննդաբերության գործակցի թարձրացմանը, նույնիսկ պտղաբերության՝ բարձր տարիքային խմբերում։ 1959 թ. մայրերհամարի տվյալներով, կանանց ընդհանուր թվի մեջ պտղաբերության տարիքն ընդգրկող կանանց տեսակարար կշիռը ՀՍՍՀ-ում վրազում էր մոտ 49%, իսկ ամենապտղաբեր տարիքային խումբի՝ 20—29 տարեկանների տեսակարար կշիռը, պտղաբերության տարիքի կանանց ընդհանուր թվի մեջ 41,2% էր։

Հետպատերազմյան տարիներին այդ տարիքային խմբի ամենաբարձր աճն էլ հենց պայմանավորեց 1960 թ. ծնված երեխաների մեծ թիվը։

Սակայն 60-ական թվականների հենց սկզբից ծննդաբերության մակարդակը սկսում է իջնել։ Դա մի կողմից պայմանավորված էր բնակչության ընդհանուր թվի մեջ պտղաբերության տարիքի տեսակարար կշռի նվազումով, մյուս կողմից՝ պտղաբերության տարիքի բնակչության տարբեր տարիքային խմբերի հարաբերակցության փոփոխմամբ։

1960-ական թվականների սկզբից ծննդաբերության տարիք են թևակոխում պատերազմի տարիներին ծնված երեխաները և իջնում է պտղաբերության տարիքի բնական կրճատվելու տեսակարար կշիռը։ 1967 թ. նրանց տեսակարար կշիռը նորից սկսում է բարձրանալ, օրինակ, 1967 թ. 45,5 %-ից 1970 թ. բարձրանում է 47,0%-ի։ Բայց պտղաբերության տարբեր տարիքային խմբերի հարաբերակցությունը ավելանում է հօգուտ ցածր պտղաբերության տարիքի։ Օրինակ, ամենապտղաբեր տարիքի (20—29 տարեկաններ) կանանց տեսակարար կշիռը պտղաբերության տարիքի կանանց ընդհանուր թվի մեջ 1970 թ. իջավ 25,5 %-ի։ Մինչդեռ 35—49 տարեկան կանանց տեսակարար կշիռը 1959 թ. 25,5 %-ից 1970-ին հասավ 36,2 %-ի։ Միաժամանակ իջել էր ամուսնության գործակիցը և ծնվող երեխաների բացարձակ թիվը։ Սակայն ծնելդաբերության մակարդակը իջնում է ոչ միայն բնակչության տարիքային կատուցվածքի փոփոխության հետևանքով, այլև բոլոր տարիքային խմբերում կանանց ծնելդաբերության հատուկ գործակցի իջեցմամբ։ Ցուրաքանչյուր 1000 կնոջ հաշվով ծնված երեխաների միջին թիվը նվազում է պտղաբերության բոլոր տարիքային խմբերում։ Այսպես, օրինակ, 25—29 տարեկան յուրաքանչյուր 1000 կնոջ հաշվով ծնվող երեխաների թիվը 1969—1970 թթ., 1958—1959 թթ. համեմատությամբ, կազմից 63,1%, 30—34 տարեկանների՝ 53,2%։ Այն փոքրում է նաև մնացած տարիքային խմբերում՝ բացառությամբ 20—24 տարեկանների[29]։

Բնակչության ծնելդաբերության մակարդակը պայմանավորված է սոցիալ-դեմոգրաֆիական, տնտեսական, բնակ-աշխատանքային, ազգային, կենսաբանական բնույթի և դեմոգրաֆիական ցուցանիշների վրա փոխենց կնիքը թողնող մի շարք այլ գործոններով։ Ներկայումս պտղաբերության հատուկ գործակցի վրա ազդող գործոնները առավելապես պայմանավորված են սոցիալ-տնտեսական գործոնների փոփոխությամբ։ Ուրբանիզացիայի աստիճանի ու քաղաքային բնակչության տեսակարար կշռի բարձրացումը, բնակչության կուլտուրա-կրթական մակարդակի աճը, բժշկական սպասարկման բարելավումը, մահացության կրճատումը, երեխաների դաստիարակության, խնամքի, ուսուցման նկատմամբ պահանջների աճը և այլ պատճառներ իրենց դրոշմակի կնիքն են թողնում ծնելդաբերության մակարդակի վրա[30]։

---

29 Այս երևույթը առնչություն չունի կանանց տարիքային կառուցվածքի փոփոխության հետ և բացատրվում է առավելապես սոցիալ-տնտեսական բնույթի գործոններով։

30 Հասարակական արտադրության մեջ կանանց զբաղվածության աստիճանի բարձրացումը նրանց երեխաների թվի վրա ներազդում է մի շարք ճանապարհներով. նախ՝ տեխնիկական առաջադիմության հետ մեծանում է հանրային արտադրության մուտք գործելու համար երիտասարդության գիտելիքների նկատմամբ ներկայացվող պահանջը, որը հետաձգում է ամուսնության տարիքը։ Տեխնիկական առաջադիմության համեմատ մեծանում է նաև աշխատանքի ընթացքում աշխատուժի մշտական որակավորման պահանջը, ընդհանրապես աճում են կուլտուրական և ինտելեկտուալ զարգացման պահանջները։ ՀՍՍՀ-ում 1959 թ. բարձրագույն, միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող յուրաքանչյուր մայր ունեցել է 1,9 երեխա, ոչ լրիվ միջնակարգ և յոթնամյա կրթություն ունեցող մայրը՝ 2,3, իսկ տարրական կրթություն ունեցող մայրը՝ 2,5 երեխա։ (Տե՛ս «Շիրակ», 1972, № 6, էջ 41)։ Հայաստանում ընդհանրապես տարածված էր վաղ ամուսնությունը, որը ծնելդաբերության բարձր մակարդակի նախապայմաններից մեկն էր։ 1914 թ. աղջիկների ամուսնության միջին տարիքը կազմում էր 17, 1930 թ.՝ 20,3 և 1940 թ. 22,6։ (Տե՛ս «Շիրակ», 1972, № 6, էջ 40)։ 1926 թ. ամուսնացող կանանց ընդհանուր թվի մեջ 20 տարեկանից փոքր կանայք կազմում էին մոտ 73%, իսկ

Որոշակի տարբերություն գոյություն ունի մեր երկրի տարբեր ազգությունների կանանց ծննդաբերության մակարդակների միջև։ Դա բացատրվում է պատմական, սոցիալ-տնտեսական պայմաններով և ազգային առանձնահատուկ գծերով, որոնք շարունակում են պահպանվել նաև այժմ։ Սովորույթի և ազգային առանձնահատկության հետ միասին, թեև տարբերություններ կան ապրելակերպների, դյուղի ու քաղաքի բնակչության կուլտուր-կրթական մակարդակների, երեխաների խնամքի, դաստիարակության, նրանց ուսուցման, կենսապայմանների, կենցաղային ու բժշկական սպասարկման մակարդակների, հանրային արտադրության մեջ կանանց ընդգրկվածության աստիճանի և սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք այլ գործոնների միջև։ Ընդհանուր տենդենցն այն է, որ ծննդաբերության մակարդակի վրա սովորույթի և ազգային առանձնահատկության ուժը աստիճանաբար թուլանում է։

ՀՍՍՀ բնակչության ամման կարևոր գործոն է մահացության գործակցի անընդհատ իջեցումը, որը հանգեցնում է մարդկանց կյանքի միջին տևողության երկարացմանը։ Դա մեր երկրում բնակչության ավելացման կարևոր պայմաններից մեկն է։ Բնակչության ընդհանուր մահացությունը կրճատվելու շնորհիվ նրա բնական աճն ավելի դանդաղ է իջնում, քան ծննդաբերության մակարդակը։ Դրա շնորհիվ վերջին տարիներին ծննդաբերության գործակցի խիստ իջեցումը չի կարողացել մեծ ազդեցություն ունենալ բնակչության բնական աճի վրա։ Ավելին, 1913 թ. համեմատությամբ, եթե բնակչության 1000 շնչի հաշվով 1970 թ. ծնվող երեխաների թիվը նվազել է 24,2 մարդով, ապա բնակչության բնական աճը նվազել է ընդամենը 5,4-ով։ Կամ 1965 թ. բնակչության 1000 շնչի հաշվով 12,1 մարդով ավելի քիչ է ծնվել, քան 1940 թ.։ Մինչդեռ բնական աճի տարբերությունը վազմել է ընդամենը 4,1 մարդ։ Այսպիսով, ծննդաբերության մակարդակի իջեցումը, որ ուղեկցվել է մահացության կրճատմամբ, պայմանավորել է բնակչության բնական աճի առավել դանդաղ իջեցումը։

Սովետական Հայաստանի բնակչության մահացության ընդհանուր գործակիցը աշխարհում ներկայումս ամենացածրն է։ 1970 թ. բնակչության 1000 շնչի հաշվով մահացել է ընդամենը 5,1 մարդ։ Հատկապես կրճատվել է մանկական մահացությունը։ 1970 թ. մահացությանն ընդհանուր գործակիցը, 1940 թ. համեմատությամբ, իջել է 2,7, իսկ մինչև մեկ տարեկան երեխաների հաշվով՝ 4,8 անգամ։

մինչև 18 տարեկանները՝ 36% (տե՛ս „Советская Армения в цифрах". Статистический справочник, 1923–1927 гг. Ереван, 1928, стр. 29)։ Սակայն հետպատերազմյան շրջանում վաղ ամուսնությունը զգալիորեն կրճատվեց, հիմնականում ամուսնանում են 20—29 տարեկանները։ 1963 թ. ՀՍՍՀ-ում ամուսնացող կանանց ընդհանուր թվում մինչև 20 տարեկանները կազմում էին 15%, իսկ 20—29 տարեկանները՝ 70%։ 1970 թ. համապատասխանաբար կազմեցին 25,8 և 56,4%։ 60-ական թվականների կեսերին խիստ չափով պակասեցին 20—29 տարիքի կանայք և ավելացան 18—19 տարեկանները։ Դրա հետևանքով 20—29 տարեկան հասակում ամուսնացող կանանց տեսակարար կշիռը ամուսնացողների ընդհանուր թվում իջավ։ Միաժամանակ բարձրացավ համեմատաբար ցածր տարիքային խմբի ամուսնության գործակիցը։ Այսպես, մարդահամարների տվյալներով (1959 թ., 1970 թ.) 17—18 տարեկան աղջիկներն ավելացել են 38,3%-ով, մինչդեռ 20—29 տարեկանները 18%-ով պակասել են։ Դրա հետևանքով ամուսնության գործակիցը 1959 թ. 12,2 մարդուց 1970 թ. իջել է 7,3 մարդու։ 20—29 տարեկան աղջիկների բացարձակ թվի պակասելը մեծացրել է 18—19 տարեկան աղջիկների ամուսնանալու հնարավորությունը։

Մահացության գործակցի իջեցումը տարիքային խմբի ծայրաթևերից մեկում կանխորոշում է նրա բարձրացումը մյուս ծայրաթևում։ Երեխաների մահացության նվազումը պայմանավորում է բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխություն՝ օգուտ մեծահասակների։ Հայաստանում ևս գործում է զարգացած երկրներին հատուկ այն ընդհանուր օրինաչափությունը, որ փոքրահասակների խմբում մահացությունն ընթանում է իջնելու, իսկ առավելապես մեծահասակների խմբում՝ բարձրանալու ուղղությամբ։ Արտադրողական ուժերի ցածր մակարդակ ունեցող երկրներում, ուր բնակչության առողջապահական միջոցառումների հետ միասին բավարար չէ նաև բժշկական սպասարկումը, մանկական մահացությունը բարձր է, որի հետևանքով հաջորդ տարիքային խումբը են թևակոխում միայն ֆիզիկապես առողջ և ամրակազմ երեխաները։ Այդ պատճառով էլ բնակչության, հետևապես և մահացածների ընդհանուր թվի մեջ իջնում է տարեց մարդկանց տեսակարար կշիռը։ Մինչդեռ բնակչության կյանքի տևողության բարձրացումը համընթացնում է մահացածների ընդհանուր թվի մեջ տարեց մարդկանց տեսակարար կշռի բարձրացմանը։

ՍՍՀՄ բոլոր այն հանրապետություններում, որտեղ բնակչության տարիքային կառուցվածքում բարձր է մեծահասակների տեսակարար կշիռը և համեմատաբար բարձր է նաև բնակչության կուլտուրա-կրթական ու նրան սպասարկման մակարդակը, մանկական մահացության ցուցանիշը շատ ավելի ցածր է՝ մահացության ընդհանուր բարձր մակարդակի պայմաններում։ Այսպես, օրինակ, մեծահասակների մահացության մակարդակը ՍՍՀՄ միջինից բարձր է մերձբալթյան բոլոր հանրապետություններում, ՌՍՖՍՀ-ում, Ուկրաինական ՍՍՀ-ում, Մինչդեռ Անդրկովկասում և միջինասիական հանրապետություններում այն ՍՍՀՄ միջինից ցածր է, այն դեպքում, երբ մանկական մահացությունը վերջիններում ավելի բարձր է[31]։

Մահացության արագ տեմպերով իջնելը մեր երկրում պայմանավորեց նաև ծննդաբերության մակարդակի նվազումը[32]։ Ուստի արտադրողական ուժե-

---

31 1967 թ. ՍՍՀՄ այն բոլոր խոշոր քաղաքներում, ուր 1000 ծնված երեխայից մինչև 1 տարեկան դառնալը մահացածների ավելի քիչ են, քան ՍՍՀՄ միջին ցուցանիշն է, մահացության ընդհանուր ցուցանիշը համեմատաբար ավելի բարձր է։ Օրինակ, 1968 թ. ՍՍՀՄ-ում ծնված յուրաքանչյուր 1000 երեխայից մինչև 1 տարեկան դառնալը մահացածների թիվը կազմել է 26, իսկ բնակչության 1000 չնչի հաշվով մահացությունը՝ 7,7, 1967 թ. Մոսկվայում այդ ցուցանիշները կազմել են 22 և 9,2, Լենինգրադում՝ 20 և 8,4, Ռիգայում՝ 15 և 8,9 և այլն, մինչդեռ Տաշքենդում յուրաքանչյուր 1000 ծնված երեխայից մինչև 1 տարեկան դառնալը մահացել են 40-ը, իսկ մահացության ընդհանուր գործակիցը ՍՍՀՄ միջինից ավելի ցածր է՝ 7,1, Բաքվում համապատասխանաբար կազմել է 32 և 7,2, Թբիլիսիում՝ 31 և 7,4, Երևանում՝ 28 և 5,3, Ալմա-Աթայում՝ 31 և 7,1 և այսպես մնացած բոլոր քաղաքներում (տե՛ս „Вестник статистики", 1968, № 12, стр. 79—80).

32 Երեխաների կենդանի մնալու հավանականությունը ընտանիքի միջին չափի կայունացման և նրա ներընտանեկան մեծությունը գիտակցորեն կարգավորելու կարևոր պայման է։ Մանկական մահացության մշտական իջեցումը հնարավորություն է տալիս ընտանիքում ունենալ երեխաների ցանկացած քիվը։ Ծննդաբերության ցածր մակարդակը չի կարող ապահովել ոչ միայն ընդլայնված, այլ նույնիսկ պարզ վերարտադրությունը։ Օրինակ, 1913 թ. Հայաստանում ծնված երեխաների միայն 80%-ն էր դառնում 1 տարեկան, այդպես էր նաև 1937 թ.։ 1940 թ. 1 տարեկան հասնում էր ծնված երեխաների 88%-ը։ Համաձայն մահացության գործակիցների, 1913 թ. մինչև 15—20 տարեկան էր դառնում միայն ծնվածների կեսը։ Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ նույնիսկ 1939 թ., որպեսզի ամեն մի ամուսնացող զույգ կարողանար ապահովել ընտանիքի պարզ վերարտադրությունը, այսինքն 2 երեխա հասցնել

րի զարգացման մակարդակը գտնվում է անուղղակի կապի մեջ բնակչության ծննդաբերության հետ և, իր հերթին, վերոհիշյալ գործոնների միջոցով ազդում է նաև նրա մակարդակի վրա։

Քանի որ ՀՍՍՀ-ում բնակչության մահացության մակարդակը ցածր է, նրա հետագա կրճատման հնարավորությունները պակասում են, և այն չի կարող դառնալ բնակչության բնական աճի այնպիսի ազդակ, ինչպիսին էր մինչև այժմ։

Հետպատերազմյան շրջանում ևս ՀՍՍՀ-ում բնակչության աճի կարևոր գործոն է բնակչության միգրացիայի դրական մնացորդը։ ՍՍՀՄ-ում բնակչության մեխանիկական տեղաշարժերը պայմանավորված են ոչ միայն երկրի ներսում տնտեսական շրջանների միջև արտադրողական ուժերի զարգացման մակարդակների տարբերությամբ, այլ նաև մեր տնտեսակարգի ընձեռած հնարավորություններով, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ի մի համախմբել տվյալ ժողովրդի աշխարհով մեկ սփռված բեկորները։ 1940 թ. հայրենադարձների թիվը 75 հազար էր[33]։

1946—1947 թթ. Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Եգիպտոսից, Պաղեստինից, Իրաքից և այլ երկրներից հայրենիք վերադարձան 86,5 հազար հայեր[34]։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո հայրենիք վերադարձած հայության ընդհանուր թիվը հասնում է ավելի քան 200 հազարի[35]։

Ներկայումս ՀՍՍՀ-ին հատուկ է նաև միջհանրապետական միգրացիայի դրական մնացորդը։ Այն 1960 թ. կազմել է բնակչության աճի 6,7%-ը, իսկ 1970 թ.՝ մոտ 20 %։ Մարդահամարների տվյալներով՝ 1959—1970 թթ. հանրապետությունում բնակչության ընդհանուր աճի 20 %-ը՝ մոտ 146 հազար մարդ, ապահովվել է միջհանրապետական միգրացիայի հաշվին։

ՀՍՍՀ բնակչության միգրացիայի գլխավոր աղբյուրները ՌՍՖՍՀ և Անդրկովկասյան հանրապետություններն են։ Այսպես, օրինակ, այլ հանրապետություններից Հայկական ՍՍՀ քաղաքներ եկողների 22%-ը գալիս են ՌՍՖՍՀ-ից, 5,3%-ը՝ Ուկրաինայից, 20,6 %-ը՝ Ադրբեջանից, ավելի քան 16%-ը՝ Վրաստանից։ ՀՍՍՀ քաղաքներից այլ հանրապետություններ գնացողների 37,2 %-ը մեկնում է ՌՍՖՍՀ, 9 %-ը Ուկրաինա, 3 %-ը՝ Վրաստան և 18 %-ը՝ Ադրբեջան։

Ինչ վերաբերում է գյուղական բնակչության միջհանրապետական տեղաշարժություններին, ապա այն բնութագրվում է զգացողական մնացորդով և ընկնի մեծությունն է կազմում։

Բնակչության տեղաշարժության դրական մնացորդը հիմնականում հայ ուսանողներն են, որոնք ՀՍՍՀ են մեկնում մայրենի լեզվով բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու նպատակով։ Ստանալով կրթություն նրանք մեծ մասամբ աշխատանքի են անցնում ՀՍՍՀ-ում։

Տեղի է ունենում նաև հանրհանրապետական միգրացիա, որը բնութագրվում է հիմնականում գյուղից քաղաք, ինչպես նաև փոքր քաղաքներից մեծ

մինչև 30 տարեկան հասակը, պետք է ունենար միջին հաշվով 2,81 երեխա, 1950 թ.՝ 2,33, 1970 թ.՝ 2,1։

33 Տե՛ս «Կարուն», 1970, № 11, էջ 89։

34 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀ ՍՏ ՊԿՄ, ֆ. 362, ց. 2, գ. 25, թթ. 1—3, 7—8, գ. 28, թ. 30.

35 Տե՛ս „Литературная газета", 27. IX, 1972.

քաղաքներ փնտակչության տեղաշարժությամբ։ Մեկ վայրից մի այլ վայր բնակչության ներհանրապետական տեղափոխությունները 1970 թ. կազմել են ավելի քան 22 հազար մարդ, որի 53 %-ը՝ քաղաքից—քաղաք է տեղափոխվել, իսկ 47 %-ը՝ գյուղից քաղաք։

Քաղաքից գյուղ մեկնած բնակչությունը կազմում է գյուղից քաղաքներ մեկնած բնակչության միայն 18%-ը։

ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության տվյալների հետազոտությունը ցույց է տալիս, որ ՀՍՍՀ քաղաքներից մեկնածների և քաղաքներ եկողների 26%-ի շարժառիթը ավելի նպատակահարմար աշխատանք ունենալն է, 16 %-ինը՝ ուսումը շարունակելը։ Քաղաքներ մեկնողների 65%-ը և քաղաքներից գնացողների 70%-ը 16—29 տարեկանի հասած մարդիկ են։ Եթե 25 տարեկանից բարձր տարիք ունեցող բնակչության տեղափոխության նպատակը աշխատանքն է, ապա 16—19 տարեկանների՝ ուսումն է։

Այս ամենից պարզ է, թե ինչու հանրապետությունում հատկապես աճում է քաղաքային բնակչությունը։ Այն 1970 թ., 1959 թ. համեմատությամբ, ավելացել է 68%-ով, մինչդեռ գյուղական բնակչությունը՝ ընդամենը 15%-ով։ Բայց պետք է նկատել, որ քաղաքային բնակչությունը հիմնականում կենտրոնացել է Երևան, Լենինական և Կիրովականի քաղաքներում։ 1970 թ. այդ քաղաքներում բնակվում էր հանրապետության քաղաքային բնակչության ավելի քան 70 %-ը։ Վերջին տասնամյակում, հատկապես, միջին և մի շարք փոքր քաղաքների զարգացման ընթացքն փոխվել է։

Այսպիսով, ՀՍՍՀ բնակչությունը հետևյալ տարում ավելացել է 1.710 900 մարդով 1922 թ. 782 հազարից 1970 թ. հունվարին հասնելով 2.493 հազարի։ Դա միայն մի միայն վարող էր տեղի ունենալ սովետական կարգերի պայմաններում։

ՀՍՍՀ բնակչությունը իր աճի համեմատաբար բարձր տեմպերը, հիմնականում բնական աճի հաշվին, պահպանի նաև ապագայում։ Բայց որոշ ժամանակ բնակչության բնական աճը կշարունակի պահպանել իջնելու հակումը։ Բնակչության պտղաբերության տարիքի ոչ պատեհնպաստ կառուցվածքի հետևանքով ծնվող երեխաների թիվը կավելանա չնչին չափերով։

Մեր հաշվարկներով՝ ՀՍՍՀ-ում պտղաբերության տարիքի կանանց տեսակարար կշիռը 1968 թ. սկսում է բարձրանալ, իսկ ծնվողների բացարձակ թիվը շարունակում է իջնել։ 1973 թ. սկզբին ՀՍՍՀ-ում պտղաբերության տարիքի կանանց թիվը, 1959 թ. համեմատությամբ, հավանաբար, կավելանա շուրջ 47—48 %-ով, բայց կծնվի 18—19 %-ով քիչ երեխա։ Դա բացատրվում է ոչ միայն ծնունդբերության մակարդակի իջեցումը պայմանավորող demոգրաֆիական բնույթի գործոններով, այլև պտղաբերության տարիքի կանանց տարիքային կառուցվածքով։ Մինչև 1972—1973 թթ. հիմնականում կավելանա ցածր պտղաբերության տարիքի կանանց թիվը։ Օրինակ, մինչև 19 և 35—44 տարեկան կանանց թիվը 1973 թ. սկզբին, 1959 թ. համեմատությամբ, կավելանա 2,3 անգամ։ Մինչդեռ 20—29 տարեկան կանանց թիվը կկազմի 1959 թ. 92%-ը։ Այսպիսով, կանանց թվի ավելացումը մի շարք տարիների ընթացքում տեղի է ունենում առանձնապես տարիքի կանանց ցածր տեսակարար կշռի պայմաններում։ Դրա հետևանքով էլ ծնունդբերության մակարդակը դանդաղ է բարձրանում։

ՀՍՍՀ-ում 60-ական թվականներից սկսած ծննդաբերության բացարձակ մակարդակի իջեցումը կտևի մինչև 1971—1972 թթ., որից հետո կսկսվի նրա դանդաղ աճը։ 1971—1977 թթ. 20—34 տարեկան կանանց տեսակարար կշիռը պտղաբերության տարիքի կանանց ընդհանուր թվի մեջ կիջնի մինչև 38—39 %-ի (1959 թ. այն կազմում էր 59,3 %)։ 1977 թ. սկսած այդ տարիքի կանանց տեսակարար կշիռն աստիճանաբար կբարձրանա և 1985—1986 թթ. հավանարար կկազմի մոտավորապես 53%։

Ըստ ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի հաշվարկների[36] պտղաբերության տարիքի կանանց տարիքային խմբերի հարաբերակցությունը 1971—1990 թթ., հավանաբար, կունենան հետևյալ արտահայտությունը.

Տարիքային տարբեր խմբերի կանանց տեսակարար կշիռը պտղաբերության տարիքի կանանց ընդհանուր թվաքանակի մեջ (տոկոսներով)

Տարիքային խմբերը	1959թ.	1970թ.	1973թ.	1975թ.	1980թ.	1985թ.	1990թ.
Պտղաբերության տարիքի կանայք	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Մինչև 19 տարեկաննները	15,1	20,5	21,3	22,3	21,3	17,1	15,7
20-ից մինչև 24	22,1	14,4	16,2	17,4	19,8	20,0	16,9
25-ից մինչև 29	19,1	11,1	9,5	11,6	15,5	18,5	19,4
30-ից մինչև 39	27,4	32,0	28,7	24,3	18,9	24,3	30,9
40-ից մինչև 49	16,3	22,0	24,3	24,4	24,5	20,1	17,1

Պտղաբերության տարիքի կանանց ընդհանուր թվաքանակի մեջ, նրա տարբեր խմբերի հարաբերակցության փոփոխության հետևանքով, 1961 թ. սկսած իջնում է ծնվող երեխաների բացարձակ թիվը։ 1970—1971 թթ. նշմարվում է նրա դանդաղ աճը, իսկ 1979—1980 թթ. ծնվողների բացարձակ թիվը կհավասարվի 1959 թ. մակարդակին։ Բայց դա տեղի կունենա, երբ 1979 թ. հունվարի մեկին բնակչության ընդհանուր աճը 1959 թ. մակարդակը գերազանցի 72—73, կանանց բացարձակ թիվը՝ 68—69 և պտղաբերության տարիքի կանանց թիվը՝ 74—75 %-ով։ 1979—1989 թթ. ծնվող երեխաների բացարձակ

36 Հանրապետության բնակչության վերարտադրությունը պայմանավորող սոցիալ-տնտեսական ու դեմոգրաֆիական գործոնները բացահայտելու և ապագայում դրանց օրինաչափությունները կանխատեսելու հիման վրա ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի աշխատանքի էկոնոմիկայի բաժինը տնտեսական գիտությունների թեկնածու Վ. Ե. Խոշաբեկյանի ղեկավարությամբ հաշվարկել է ՀՍՍՀ բնակչությունը 1971—1990 թթ.՝ յուրաքանչյուր տարվա համար, ըստ սեռի և տարիքի։ 1967—1968 թթ. ինստիտուտում կատարված Հայկական ՍՍՀ բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966—1985 թթ.ը ուսումնասիրության արդյունքները 1969 թ. քննարկվել են ՀՍՍՀ ԳԱ նախագահությունում և որպես տեսական հետաքրքրություն ու գործնական նշանակություն ունեցող աշխատանք արժանացել հավանության։ 1970 թ. աշխատանքային ռեսուրսների թվաքանակի վերաբերյալ այդ ուսումնասիրությամբ արված կանխատեսումների բազմաթիվ տվյալներ (ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թիվը, նրա բաշխումը նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտների միջև, զբաղվածության արդյունաբերության մեջ, գյուղատնտեսության հանրային ոլորտում և այլ ճյուղերում) ճշգրտությամբ համընկան 1970 թ. փաստացի տվյալներին։ (Մեռնող. խմբագրությանը)։

թիվը կավելանա։ 1990 թ. հավանական բար կծնվի 169—170 %-ով ավելի շատ երեխա, քան 1970 թ.։

Արտադրողական ուժերի զարգացումը և սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունը վրա նգեցնեն հեռանկարում բնակչության կյանքի միջին տևողության երկարացմանը և տարեց բնակչության թվի ավելացմանը։ Դրա հետևանքով բնակչության տարիքային կառուցվածքում պետք է բերության տարիքի բնակչության հարաբերական թիվը կնվազի։ Սակայն ՀՍՍՀ-ում այդ պրոցեսը կարող է տեղի ունենալ 1990—1991 թթ. հետո ընկած ժամանակահատվածում։ Դրան զգալի չափով կնպաստի 1964—1975 թթ. ծնված բնակչության մուտքը պետական տարիք։ Այդ տարիներին ծնվել են և կծնվեն քիչ երեխաներ։ Ուստի պետական տարիքի բնակչության տեսակարար կշիռը ծննդի վրա բացասական կազդի նաև 90-ական թվականների կեսերից հետևակարոմ տրոշ տարիքում կիջնի նաև մահացությունը։

Սակայն մանկական տարիքում հեռանկարում մահացությունը չի իջնի այն տեմպերով, ինչ տեղի է ունեցել 60-ական թվականների ընթացքում։ Բանն այն է, որ 60-ական թվականների կեսերից ՀՍՍՀ-ում մինչև 1 տարեկան երեխաների մահացության գործակցի խիստ իջեցումը պայմանավորված էր մի շարք պատճառներով, այդ թվում՝ ծնվող երեխաների թացարձակ թվի նվազեցմամբ։ Դրա հետևանքով փաստորեն միայն մահացության թացարձակ մեծությունը, այլև գործակիցը։ Ուստի՝ մանկական մահացության գործակիցը արագ տեմպերով կշարունակի իջնել մինչև 1976—1977 թ., որից հետո, տարեցտարի ծնվողների թացարձակ թվի ավելացման հետ միասին՝ երեխաների մահացության գործակցի իջնելու տեմպերը կթուլանան։

Մահացության գործակիցը հեռանկարում բոլոր տարիքային խմբերում կդրսևորի իջնելու, իսկ 60 և ավելի տարիքում թարձրանալու միտում։ Այնուհանդերձ մինչև 80-ական թվականների կեսերը մահացության ընդհանուր գործակիցը կիջնի։

Նկատի առնելով բնակչության ծնունդի, մահվան և սպասվելիք միգրացիոն ցուցանիշների հեռանկարում արտահայտվող տենդենցները, ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում հաշվարկվել է ՀՍՍՀ բնակչությունը մինչև 1890 թ.՝ ըստ սեռատարիքային կտրվածքի։

Եվ եթե 1959—1970 թթ. ՀՍՍՀ բնակչությանը բնորոշ է եղել մինչաշխատանքային տարիքի բնակչության առաավել արագ աճը, ապա այսուհետև, առավել արագ տեմպերով կաճի աշխատատանքային տարիքի բնակչությունը։ 1959—1970 թթ. ՀՍՍՀ ընդհանուր բնակչությունն ավելացավ 41 %-ով, ըստ որում աշխատատանքային տարիքի բնակչությունն ավելացավ ընդամենը 30,5, մինչդեռ մինչաշխատատանքային և վեհատարիքաշխատանքային տարիքինը՝ ավելի քան 53 %-ով։ Այդ պատճառով էլ աշխատատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ 1959 թ. 52,2 %-ից 1966 թ. իջավ և կազմեց 47,5, իսկ 1970 թ. մարտահամարին՝ 48,2 %։

Ներկայումս հանրապետության բնակչությունը թևակոխել է վերարտադրության մի նշանակի փուլ, երբ սկսում է նրա ընդհանուր թվաքանակում ավելանալ աշխատատանքային տարիք մտնեցողների բաժինը։ Բանն այն է, որ, նախ, աշխատատանքային տարիքը ներկայումս համալրում են 50-ական թվականներին

Ծնված երեխաները, մի ժամանակաշրջան, որ բնութագրվում է ծննդաբերության բարձր մակարդակով։ Երկրորդ, աշխատանքային տարիքից սկսել է դուրս գալ այն սերնդի մարդկանց մի մասը, որը մասնակցել է Հայրենական պատերազմին, մի սերունդ, որ բնակչության մեջ քիչ տոկոս է կազմում։ Աշխատանքային տարիք մուտք գործող մարդկանց թիվը դանդաղորեն սկսել է ավելանալ 1966—1967 թթ.։

Ըստ ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի հաշվարկների, այսուհետև ևս աշխատունակ տարիք մուտք գործողների բացարձակ թիվը ՀՍՍՀ-ում տարեցտարի կավելանա և 1976—1980 թթ. տարեկան կկազմի 72—73 հազար մարդ՝ 1961 թվականի 22 հազարի դիմաց։ Ենթադրվում է, որ դա աշխատանքային տարիքը մուտք գործողների ամենամեծ թիվն է, որ նկատվելու է ամբողջ հարյուրամյակի ընթացքում և որը հավանաբար մնա անգերազանցելի՝ ընդհուպ մինչև 20-րդ դարի վերջին տասնամյակը։

Հաշվումները ցույց են տալիս, որ 1971—1990 թթ. հանրապետությունում աշխատանքային տարիք մուտք կգործեն ավելի քան 1.285.000 պատանիներ ու աղջիկներ։ Դրա շնորհիվ բնակչության կառուցվածքում աշխատանքային տարիք ունեցողների տեսակարար կշիռը կբարձրանա և 80-ական թվականների կեսերին հավանաբար կկազմի 56,5—57 %։ Դա տեղի կունենա մի կողմից աշխատանքային տարիքի բնակչության բացարձակ ավելացմանն, մյուս կողմից՝ մինչաշխատանքային տարիքի բնակչության աճի տեմպերը դանդաղելու միջոցով։

Սակայն 80-ական թվականների սկզբնեերից աշխատանքային տարիքի բնակչության աճի տեմպերը կսկսեն նվազել։ 1985—1990 թթ. տարեկան միջին հաշվով աշխատանքային տարիքի բնակչությունը կավելանա ընդամենը 25—26 հազարով։ Դա բացատրվում է մի կողմից աշխատունակ տարիք մուտք գործողների թվաքանակի նվազեցմամբ, իսկ մյուս կողմից աշխատանքային տարիքից թոշակառու տարիքի մուտք գործողների թվաքանակի ավելացումով։ 1985—1990 թթ. աշխատանքային տարիք կթևակոխեն 60-ական թվականների վերջին և 70-ական թվականների սկզբին ծնված երեխաները։ Այդ տարիներին տարեկան շուրջ 20 հազարով ավելի քիչ երեխաներ ծնվեցին, քան 50-ական թվականների վերջերին և 60-ական թվականների սկզբներին։ Մինչդեռ 1971—1980 թթ. աշխատանքային տարիքից թոշակառու տարիք անցածների (մանավանդ տղամարդկանց) բացարձակ թիվը շատ քիչ է լինելու, այն 1977—1980-ական թվականներից սկսած աստիճանաբար կավելանա և 1985—1990 թթ. մեծ չափերի կհասնի։

70-ական թվականների վերջերին բնակչության կառուցվածքային փոփոխությունները՝ հօգուտ ավելի երիտասարդ տարիքային խմբերի, թեև կհանդեցնեն ծնվող երեխաների բացարձակ թվի աստիճանական ավելացմանը (ընդհուպ մինչև 90-ական թվականների սկիզբը), բայց բնակչության ընդհանուր թվի մեջ երեխաների տեսակարար կշիռը մինչև 2000 թ., ըստ երևույթին, չի բարձրանա։ Մինչաշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը 1959 թ. 37,8 և 1970 թ. 41 %-ից կիջնի և 1985—1990 թթ., հավանաբար, կկազմի 31,5—32,5 %։

ՀՍՍՀ բնակչության տարիքային կառուցվածքը 1971—1990 թթ., հավանաբար, հետևյալ արտահայտությունը կունենա։

ՀՍՍՀ բնակչությունն ըստ տարիքային խմբերի

Տարիքային խմբերը	1959թ.	1970թ.	1975թ.	1980թ.	1985թ.	1990թ.
Ամբողջ բնակչությունը Այդ թվում՝	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Մինչաշխատունակ տարիքը (ներառյալ 15 տարեկաններըը)	37,7	41,3	36,0	32,4	31,5	32,4
Աշխատունակ տարիքը (16—54 տարեկան կանայք, 16—59 տարեկան տղամարդիկ)	52,2	48,2	53,1	56,3	56,0	54,2
Կենսաթոշակային տարիքը	10,1	10,5	10,9	11,3	12,5	13,4

Այսպիսով, ըստ մեր հաշվարկների հունվարի 1-ի վիճակով 1970 թ. համեմատությամբ 1976 թ. բնակչությունը հավանաբար կավելանա 12, 1981 թ.՝ 28,5, 1986 թ.՝ 43—43,5, 1991 թ.՝ շուրջ 60%-ով։ 1990 թ. վերջերին ՀՍՍՀ տերիտորիայում բնակչությունը, հավանաբար, կհասնի 3.970.000 մարդու։

НАСЕЛЕНИЕ АРМ. ССР ВЧЕРА, СЕГОДНЯ И ЗАВТРА

В. Е. ХОДЖАБЕКЯН

Резюме

Рост населения Арм. ССР всегда характеризовался высокими показателями. В 1970 г. ее население, по сравнению с 1920 г., увеличилось в 3,4 раза: из 720 тысяч человек превратилось в 2491 тысяч.

Бурный рост населения в первую очередь обусловлен естественным ростом, но в отдельные периоды большую роль в воспроизводстве населения сыграл и механический рост.

Однако под воздействием изменения возрастной структуры населения, а также социально-экономических факторов, выступает ряд особенностей в воспроизводстве населения, приводящих к снижению рождаемости. В республике низкий уровень рождаемости будет иметь место до второй половины 70-х годов, хотя абсолютная численность родившихся начнет увеличиваться с 1972—1973 гг. в связи со структурным изменением населения.

В 1980 г. родится столько детей, сколько родилось в 1960 г., что характеризует высокий уровень рождаемости. В 1990 г. в республике родится детей на 26% больше, чем в 1960 г. Одновременно рост населения составит 212%. Следовательно, за этот период, хотя и абсолютная численность родившихся детей увеличится, уровень рождаемости будет падать под воздействием ряда социально-экономических факторов.